ԳԵՈՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՁԱՐԿԵՐԱԿԱՅԻՆ ՃՆՇՄԱՆ ՌԻԹՄԵՐԻ ՎՐԱ ԵՎ ԴՐԱՆՑ ՍԻՆԽՐՈՆԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

Գյուլբուդաղյան Ռ.Ռ., Քոչարյան Ս.Պ.

Երևանի Մ.Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի գիտահետազոտական կենտրոն, Երևան, Հայաստան

Սույն աշխատանքի նպատակ է՝ զարկերակային հիպերտենզիայով հիվանդների մոտ բացահայտել սիմպտոմատիկ հիպերտենզիան, մասնավորապես, հեմոդինամիկ հիպերտենզիան, որը պայմանավորված է գեոմագնիսական դաշտի (ԳՄԴ) էկզոգեն ազդեցությամբ՝ որպես տիեզերքային եղանակը բնորոշող ցուցանիշների կոմպլեքսի մի բաղադրիչ:

Այս հետազոտությունը իրականացվել է կրոս-կորելյացիայի (ԿԿ) մաթեմատիկական մեթոդի կիրառմամբ:

Հաստատված է, որ 10 ուսումնասիրված հիվանդներից 4-ի մոտ ԿԿ-ի գործակիցների արժեքները՝ սիստոլիկ և դիաստոլիկ ճնշումների կենսառիթմերի ու զարկերակի անոմալ ռիթմերի միջև առանձին-առանձին և ԳՄԴ-ի ինդուկցիայի ռիթմերի միջև, անոմալ ազդեցությունից առաջ և դրանից հետո, միջինում փոփոխվում են 0,3÷0,8 տիրույթում: Իսկ ռեակցիայի ժամանակամիջոցի համապատասխան արժեքներն ի պատասխան ԳՄԴ-ի անոմալ ազդեցության գտնվում են 1÷ 12 ժամ տիրույթում:

Հեմոդինամիկ հիպերտենզիայով չորս բացահայտված հիվանդների համար, ԳՄԴ-ի ռիթմերի ազդեցության լիակատար ուսումնասիրության նպատակով, մեր կողմից առաջարկվում է կիրառել ավելի վաղ մանրամասնորեն վերլուծած դինամիկ ինքնատատանողական պարամետրիկ ոչ ավտոնոմ մոդելը:

Աշխատանքում նշված մոդելի հիման վրա բացահայտվել և ուսումնասիրվել են այն պայմանները, երբ հետազոտվող համակարգում (սրտի կենսառիթմերը + ԳՄԴ-ի ինդուկցիայի ռիթմերը) հնարավոր է սինխրոնացում:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY